

ԱՐԵՒԵԼՔ	
ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒՔՆ	
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ	
Ա. ՊԱԼԻՍ, ՎԱԼԹԱԹԻԱ	
<hr/>	
ԲԱԺԱՆՈՐԴԿՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	
Պալոս համար առեկան	30
* վեցամսեայ	45
Առանցերու համար առեկան	105
* վեցամսեայ	60
Եթերներու համար առեկան	85
* վեցամսերայ	20
Թղթատի ծախք մեր վրայ	

ΦΩΤΩΝ

ԱՆԱՏՈԼԵԻ ԵՐԿԱՐՈՒՂԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Wahlzeit

10 PARAS.

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ

U.S.R. १०८०-१०

մինչեւ Խարբերդ ու Վանայ ծովը, և Մուսուլ ու Տիարպէքիր, դէպի Միջերկրական ճրգերով — ընականաբար Մէրսինը ու Իսքէնտէքրունը միայն նկատողութեան պիտի առնուին — ներշնչուած է երկրին վրայ ազգեցութիւն ձեռքբերելու փափաքէն, ինչ որ Ամերիկացիները տասը տարիէ ի վեր կ'ընեն իրենց միաժունաբներուն ձեռքով, ոչ առանց յաջողելու։ Վասն զի այդ ծրագիրները մեռելածին են՝ իրենց տնահսական կարեւորութեան տեսակէտով։ Անատոլիի երկաթուղին հիւսիսային կողմէ միակ օգտակար շարունակութիւնը պիտի ըլլայ մինչեւ Կեսարիա երկարաձգուիլը, որուն մնաշնորհը ապահովցուցած են Գերմանիները, Ամերիկացին երուն ծրագրած գիծը պիտի անցնի Անդր-Դաւրոսի շղթաներէն։ Սըվազի ու Վանայ ծովին մէջանելին խիստ դժուարին ճամբաներէն։ Շինութեան համար ահագին ծախքեր պիտի ըլլան, 500 միլիոն ֆր. կ'ըսուի։ Մարահարթին վրայ շահագործումը, որուն ցուրտ կլիման յայտնի է, անշուշտ շատ ծախքի պիտի կարօտի և անցնելիք տեղերը կը պատկանին ամբողջ ցամաքակլղին աղքատներուն։ նոյն իսկ ապագային համար որ և է հասոլթ չեն խոստանար, իրաւ է որ այդ գիծը մինչեւ մէկ աստիճան ռազմագիտական կարեւորութիւն մը ունի՝ Պարսկաստանի, Ռուսիոյ և Քիւրտեերուն դէմ, բայց ճիշդ այդ ռազմագիտական հանգամանքն է որ Ռուսիան պիտի հարկադրէ ամէն կարելի դժուարութիւն յարուցանել՝ անոր կիրառումը արգիլելու։ Օսմ. կառավարութիւնը դժուարաւ պիտի գտնէ անհրաժեշտ միջոցները՝ քիլոմետրական հանգամանքն է որ Ռուսիան պիտի հարկադրէ ամէն կարելի դժուարութիւն յարուցանել՝ անոր կիրառումը արգիլելու։ Օսմ. կառավարութիւնը դժուարաւ պիտի գտնէ անհրաժեշտ միջոցները՝ քիլոմետրական հրաշխաւորութիւնը տալու բոլորովին հասոյթէ զուրկ այդ գիծերուն, նոյն իսկ այն պարագային երբ շարունակէ անտեսական շահերը զոհել զինուուրականութեան պահանջումներուն։ Եռումուրթալը-Տիարպէքիրի երկաթուղին ամերիկան ծրագիրն ալ անտեղի բան մըն է, իրաւ է/ որ ժամանակին երբ խընդիր եղաւ Անատոլիի երկաթուղին համար գլխաւոր նաւահանգիստ մը գտնել ի քէնտէրունի ծովածոցին մէջ, Եռումուրթալըքի վրայ խորհուեցաւ։ Սակայն Պաղտատի երկաթուղին Եռումուրթալըքի հիւսիսային կողմէն մէկ քանի քիլոմետր հեռուէն պիտի սկսի՝ դէպի արեւել երթալով և դէպի Տիարպէքիր ուղղուելու համար ալ լաւագոյն ճամբան պիտի ընտրէ։ Ամերիկացին երուն կողմէ մնաշնորհ խնդրուիլը ցոյց կուտայ թէ կ'ուղուի դժուարութեան ենթարկել Գերմանիները, որոնք անժխտելի կերպով և իրապէս գերատէն մը ունին Անատոլիի մէջ։ Հոտէյտա. Սանաայի երկաթուղիին գալով, որ հարիւր քիլոմետր է, ռազմագիտական տեսակէտով բացարձակապէս անհրաժեշտ է օսմ. կալարութեան համար վերջնականապէս ապահովելու իր իշխանութիւնը եէմէնի վրայ։

ԲԱՅՐԻ ԹԱՌԵ
ԲՆՈՒԹԵԱՆ աչքերուն պէս սեւեռուն,
ՍԵՎԱՃԵԼ լեռներուն կողերն ի վար,
Կամ ձորերուն վտակներուն եղերքը,
Վայրի ծառերը ոգիներու պէս կը հակն։
Եղեւինները խոր թախծութեամբ մը կ'երգեն
Հոգեսաց մոգերու պէս մոլեռանդ,
Անէութեան խորհրդաւոր մեհեանին՝
Տերեւախիտ անտառին մէջ ամայի։
Գիհիները լուռ արձաններու պէս շարժուն,
Լեռներուն կոտորի ճամրաները կ'եղերեն,
Կարծես սեւազգեսատ յուղարկաւորներ՝
Որ լեռներուն լուռիթեան մահը կ'առաջնօրդին։
Նոճիները լեռներուն սեպ կողերն ի վար
Գերեզմաններու մէջ հանգչող մահաշունչ
Շիրիմներու պէս կը ննջեն սրտարեկ՝
Իրեւ աղօթող սեւ մայրապետներ։
Կազնիները հօկայական հասակով,
Դարերու հիւծեցնող ձանձրախտէն,
Ամայութեան այս ընդարձակ որբանին
Ժամացոյցներն են՝ մահուան ժամը չափող։
Ընկուզենիներն ու մորինիները՝
Գետերուն երիզը համբուրող պահապաններ,
Իրենց տերեւներուն խանձումին հետ
Ժամանակին դակութեան սեւ կնիքը կը կրեն։
Փշատիները խանձած տերեւներով
Դեռ գարնան ծաղիկներ կը կրեն,
Անհոտ խամրած, պղափկ դեղին ծաղիկներ,
Որ երիցուկին պէս բաղդ կը նային կեանքերու
Կաղամախիներ քնքոյշ հոգի մը ունին,
Հարսնութեան աենչով վառուած հոգի մը,
Որ անմահութեան հաւատքով վառուած՝
Ուխտատեղիի մոմն է յուսալիր։
Կնձնիները՝ փարող յարութեան,
Վերածնումի հաւատքը ունին,
Եւ սկեպտրկի պէս ոգեպաշտ,
ԱՄԵՆ տարի գարնան բախտը կը նային։

ՀՐԱԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բարիզի Ընկերային Բարձր Ուսմանց
Դպրոցին միւս ճիշդերուն պէս, Լրագրու-
թեան Դպ ոյն ալ յարածուն յաջողութիւն
մը ստացած է: 1899ին հիմնուելով 47 ա-
շակերտներով, այսօր ունի 170 աշակերտ:
Արձանագրուած երիտասարդները երկու
դասակարգերու կրնան բաժնուիլ: Առա-
ջինը կը պարունակէ անոնք որ լրագրու-
կան ասպարէզին նուիրուելով՝ անօր պատ-
րաստուիլը կէտ նպատակի կ'ընտրեն: Ըն-
դարձակ ուսում կը ստանան դպրոցին մէջ:
Կ'առաջնորդուին Հանրի Էսթիէն վարժա-
րանը, ուր իրենց ցոյց կը տրուի նախկին
մամուլներուն բանիլը, և մեծ թերթերու
գործանոցները ուր կը տեսնա: յաջորդ
օրուան թերթերուն շարուիլը, տպուիլը,
ծալլուիլը և զրկուիլը: Կանոնաւոր դասըն-
թացքներով և դասախոսութիւններով ո-

ույ բաժնուած է, կը սորվին մատուցի
ատմութիւնը, հոչակաւոր լրագրողներու
անքն ու գործերը, թէ ի՞նչպէս կը կա-
րուի լրագրի մը վարչական, տեղեկա-
ուական, խմբագրական գործը. Կ'ստա-
ն պատմական, քաղաքական, ընկե-
սին, իրաւաբանական ժանօթութիւններ,
պիտի առաջնորդեն զիրենք յառաջի-
սի հետազօտութեանց մէջ: Հոկտեմբերի
երամուտին, օրինակի համար, Յարիգեան
սմուլին ամէնէն հեղինակաւոր ներկայա-
ցիչները իրենց պիտի ոռրվեցնեն, խօ-
սկցութեանց մեթոտիկ շարքի մը մէջ,
ն փափուկ և կնճռուած մեքենականու-
թիւնը որով այսօրուան լրագիր մը կ'ըն-
ունի իր բոլոր տեղեկութիւնները. և
սզեր ըր Ֆրանսի, Տեպահ, Թանի, Շա-
ռվալպահի անօրէնները յաջորդաբար անոնց
տիր պատմեն իրենց թերթին պատմու-
ինը:

Digitized by srujanika@gmail.com

նու, ըստ Մօփէթ մնդմածայն։
Եւ որովհետեւ ծովու այդ դիւրաթեք
բնակիչներուն խայտանցները մեծ հաճոյք
կը պատճառէին, Մօփէթ սկսաւ ոշադ-
րութեամբ գիտել այն տեղը, ուր կեռար
ջուրը, որպէս զի չկորսնցնէր այն տե-
սարանը որ պիտի պարզուէր գլխիներու
պատճեն առ ի հերթուն ուղարձու

Զուրիերուն եռուց զեռը մինչեւ ապա-
ռաժուտ հրուանդանը կը հասնէր. յետոյ
դեպի աջակողմ շեղեցաւ և մինչեւ խա-
րակ մը հասաւ, որ զուրին երեսը կը գըտ-
նուէր: Յանկարծ Մօհքէթ ճիշ մը արձա-
կեց ու ոտքի ելաւ....:

փերով ծածկուած, որոնք կը վէտպէտէին արեւուն տակ. այդ արարածը խարակի մը վրայ ցատկելով հոն կեցած էր, թեւերը արեւուն երկարած: Մօիզէթի դարձուցած էր կոնակը:

Յուղումէն, դարմանքէն և սոսկումէն տեղանածի տես այդ թեփազարդ մարդուն, որ յանկարծ երեւան կուգար, ծովու խորերէն, գլիփինի մը պէս, Մօիզէթ կը խորհէր խոյս տալ:

(Tammes, 1948 b.)

2000-05 "Hobbit" 1 (22)

THE SCULLY CO.

ԶՈՒԾՎԱՌԻ ԱՐԵՎ ԱՊՀԱՅ

ՄԱՐԴԵ

— 10 —

Ա. Ռ. Ա. ԶԻՆ Մ. Ա. Ս
ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՂՁԻԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

—————
Գ.

Հիմքաներ և Մօփեր

—Օրիորդ, Կը խնդրեմ որ մինակ ձգես
զիս, ըստ Պօսի, Ժպտուն և հանդարտ....
Պէտք է հանդարտնեցնել հէք կինը.... Պա-
ռե՞ն ժամանեան մեջ ապահովեան մինչեւ

Եզք ժայռերուն վրայ պտտեցէք . . . : Այսօր
օդը շատ գեղեցիկ է:

—Հիմա կ'երթամ, Պոսի . . . : Բայց
վտանգ մը կա՞յ տիկին Մարթի համար . . . :
Բոլորովին խելագարած է, այնպէս չէ՞:

—Օ՛հ, բոլորովին, և Աստուած գիտէ
թէ ո՞րքան ատենի համար: Թերեւս ա-
միսներով, թերեւս տարիներով . . . : Գալով

